Միսաք Մեծարենց

Շերամին նինջը

Շերամատան մեջ կը հնչեն բոժոժները զիլ՝ դափին,
որուն հուշիկ կ’ընկերանա ձայնն երգեցիկ կիներու,
և կը մարի մերթ ճարճատուն ծիծաղներուն մեջ ծափին,
պատուհանեն լուսնի լույսի շափրակներ ներս կը թափին:

Ընթափանքի ժամն է պչրոտ, փափկամարմին շերասին՝
խածումն որուն՝ կը քթքթա տերևուտքին մեջ դալար.
ու սատափներ, ու զյումրյութներ, ու շողակներ… միասին.
մեկ փաղփի մեջ կը նույնանան շերամ, տերև ու լուսին:

Երազանուրբ անասնիկին օրհասն ու մահն ըսպիտակ,
վերջին քունն ալ դափ ու ծափով պիտի տոնեն վաղ գիշեր,
օդանույշի ձեռքով բանված զանակածոպ լույսին տակ
հինգ աղջիկներ հուսկ օրորը պիտի երգեն վաղ գիշեր…: